# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
# ՌԵԼՅԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ (ԻԿՐԱՆԵՏ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԵՍԿԱՐԱ (ԻՏԱԼԻԱ)

## Ներածություն

Գիտակցելով ռելյատիվիստական աստղաֆիզիկայի հետազոտությունների կարեւորությունը՝ հասկանալու համար աստղերի կյանքը, էվոլյուցիան եւ մեր տիեզերքի կառուցվածքը, ինչպես նաեւ ճանաչելու բնության հիմնարար օրենքները,

գիտակցելով, որ այս բնագավառում հետազոտությունները պետք է հիմնված լինեն միջազգային համագործակցության վրա,

ընդունելով այն, որ երկնային եւ աստղաֆիզիկական օբյեկտների ուսումնասիրությունը ունի շատ խորը արմատներ տարբեր մշակույթներում,

հաշվի առնելով երկնային մարմինների՝ պուլսարների, քվազարների եւ սեւ անցքերի հայտնաբերման նկատմամբ մեծ հետաքրքրությունը բոլոր երկրներում,

շեշտելով ռելյատիվիստական աստղաֆիզիկայում օգտագործվող եւ դրա հետ կապված տեխնոլոգիաների եւ տեխնիկայի զարգացման կարեւորությունը, ինչպիսիք են ռադիոտեխնոլոգիաները, օպտիկական, տիեզերական եւ հեռահաղորդակցության տեխնոլոգիաները,

քանի որ սույն Համաձայնագրի Կողմերը ցանկանում են ստեղծել ռելյատիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանց, այսուհետ՝ ԻԿՐԱՆԵՏ, որպես միջազգային անկախ հաստատություն՝ համապատասխան ղեկավարությամբ, իրավունակությամբ եւ համապատասխան միջազգային կարգավիճակով, լիազորություններով, արտոնություններով եւ անձեռնմխելիությամբ ու այլ անհրաժեշտ պայմաններով, որոնք հնարավորություն կտան գործել արդյունավետ իր նպատակներին հասնելու համար,

հիշեցնելով, որ Իտալիայի Կառավարությունը կբանակցի տեղակայման համաձայնագրի շուրջ, հենց որ ԻԿՐԱՆԵՏ-ը ձեռք բերի միջազգային կազմակերպության կարգավիճակ,

ստորագրող Կողմերը համաձայնում են հետեւյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ I

Հիմնադրվելու է ԻԿՐԱՆԵՏ կոչվող միջազգային կազմակերպություն, որը գործելու է համաձայն սույն Համաձայնագրին կցված եւ անբաժանելի մաս կազմող Կանոնադրությանը համապատասխան, քանի որ Կանոնադրությունը անհրաժեշտության դեպքում կարող է փոփոխվել 16-րդ հոդվածին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ II
### Ստորագրում, վավերացում, ընդունում, պարտավորված լինելու վերաբերյալ համաձայնություն, միացում

Սույն Համաձայնագիրը բաց է պետությունների եւ միջազգային կազմակերպությունների ստորագրման համար՝ Իտալիայի Հանրապետության Կառավարության հսկողության ներքո: Այն ստորագրման համար բաց կմնա երկու տարի ժամկետով՝ սկսած 2003 թվականից, եթե այս ժամկետը, նախքան ավարտը, չերկարացվի ավանդապահի կողմից՝ ԻԿՐԱՆԵՏ-ի խորհրդի խնդրանքով:

Իտալիայի Հանրապետության Կառավարությունը կլինի սույն Համաձայնագրի ավանդապահը:

Սույն Համաձայնագրով պարտավորված լինելու վերաբերյալ համաձայնությունը պետք է իրականացվի ստորագրող Կողմերի կողմից՝ նրանց օրենսդրությանը եւ ընթացակարգերին համապատասխան:

Սույն Համաձայնագրով պարտավորված լինելու վերաբերյալ պետության կամ միջազգային կազմակերպության համաձայնությունը չի հանդիսանում պարտավորություն ԻԿՐԱՆԵՏ-ին տրամադրել ֆինանսական աջակցություն՝ բացառությամբ կամավոր ներդրումների:

Առաջին պարբերության մեջ նշված ժամկետի ավարտից հետո սույն Համաձայնագիրը կմնա բաց ցանկացած պետության եւ միջազգային կազմակերպության միացման համար՝ կախված ԻԿՐԱՆԵՏ-ի ղեկավար խորհրդի հավանությունից, պարզ մեծամասնությամբ:

Միանալու փաստաթղթերը պետք է ի պահ հանձնվեն սույն Համաձայնագրի ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ III

Պայմանավորվող կողմեր

ԻԿՐԱՆԵՏ-ը հիմնելուն պես համալսարանները եւ հետազոտական կենտրոնները ազատորեն կհամագործակցեն:

ՀՈԴՎԱԾ IV

Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրը եւ դրան կցված Կանոնադրությունը ուժի մեջ կմտնեն անմիջապես սույն Համաձայնագրի Կողմեր հանդիսացող երեք պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից վավերացվելու կամ պաշտոնապես ընդունվելու պահից:

Յուրաքանչյուր պետության եւ միջազգային կազմակերպության համար, որոնք ի պահ կհանձնեն միանալու կամ պաշտոնապես ընդունելու վերաբերյալ իրենց փաստաթղթերը սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո, սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի ի պահ հանձնելուց հետո:

ՀՈԴՎԱԾ V

Դադարում

Սույն Համաձայնագրի ցանկացած Կողմ կարող է, ավանդապահին գրավոր փաստաթուղթ հանձնելով, չեղյալ հայտարարել սույն Համաձայնագիրը: Պարտավորված լինելու վերաբերյալ համաձայնության այդպիսի դադարումը ուժի մեջ կմտնի նման փաստաթուղթը ստանալու օրվանից երեք ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ VI

Վեճերի կարգավորում

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ իրականացման հետ կապված որեւէ վեճ կկարգավորվի դիվանագիտական ուղիներով:

ՀՈԴՎԱԾ VII

Բնօրինակ

Սույն Համաձայնագրի բնօրինակը, ներառյալ կցված Կանոնադրությունը, կազմված է իտալերեն եւ անգլերեն:

Ի վկայություն վերոհիշյալի՝ ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչները, լինելով պատշաճորեն լիազորված իրենց համապատասխան Կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը մեկ բնօրինակով. իտալերեն եւ անգլերեն, երկու տեքստերը հավասարազոր են:

Կատարված է Հռոմ քաղաքում 2003 թ. մարտի 19-ին, Հայաստանի Հանրապետության

կողմից՝ 2003 թ. հունիսի 12-ին:

ԻԿՐԱՆԵՏ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 1
Կարգավիճակը

1. ԻԿՐԱՆԵՏ-ը գործելու է որպես միջազգային կազմակերպություն եւ կազմակերպվելու է բացառապես գիտական եւ կրթական նպատակների համար:
2. ԻԿՐԱՆԵՏ-ը կունենա միջազգային լիարժեք իրավունակություն եւ այնպիսի իրավական հնարավորություններ, որոնք անհրաժեշտ են իր գործառույթների եւ նպատակների իրականացման համար:

ՀՈԴՎԱԾ 2
Կենտրոնակայանների գտնվելու վայրը

ԻԿՐԱՆԵՏ-ի կենտրոնակայանները կգտնվեն Պեսկարայում (Իտալիա), եթե ղեկավար կոմիտեն չորոշի դրանք տեղակայել մեկ այլ վայրում:
Օպերատիվ լինելու եւ իր նպատակին հասնելու համար ղեկավար կոմիտեն կարող է այլ երկրներում հիմնել հետազոտական կենտրոններ ԻԿՐԱՆԵՏ-ի ծրագրերին աջակցելու համար՝ համաձայն 3-րդ հոդվածի:

ՀՈԴՎԱԾ 3
Նպատակներ եւ գործունեություն

1. ԻԿՐԱՆԵՏ-ը կխրախուսի միջազգային գիտական համագործակցությունը եւ կկատարի հետազոտություններ ռելյատիվիստական աստղաֆիզիկայի բնագավառում: Այն նաեւ կհամակարգի միջազգային տեսական, փորձարարական եւ դիտարկող հետազոտությունները, որոնք կիրառում են սարքավորումներ տիեզերքում, երկրագնդի մակերեւույթին կամ ընդերքում:
2. ԻԿՐԱՆԵՏ-ի գործունեությունը բաղկացած կլինի հետեւյալից.
ա) գիտական հետազոտությունների զարգացում,
բ) դասավանդում թեկնածուական եւ դոկտորական մակարդակներում,
գ) երկարատեւ եւ կարճատեւ գիտական ուսուցում,
դ) սեմինարների եւ գիտական ժողովների կազմակերպում,
ե) գիտնականների եւ մասնագետների փոխանակման ծրագրերի կազմակերպում,
զ) հետազոտական կենտրոնների միջեւ էլեկտրոնային հաղորդակցման նոր ստանդարտների մշակում,
է) բոլոր հնարավոր դիտարկվող երկնային մարմինների վերաբերյալ տվյալների միացյալ բազայի հիմնում,
ը) հաղորդակցության նոր ստանդարտների մշակում,
թ) միջազգային գիտական կազմակերպությունների հետ համագործակցություն եւ դրանց անդամակցում,
ժ) գիտական համագործակցություն եւ տեխնոլոգիայի փոխանցում արդյունաբերության ներգրավմամբ,
ժա) ցանկացած այլ գործունեություն՝ կապված իր նպատակների հետ:
3. Ընդգրկվող գիտական ոլորտները կներառեն՝ կոսմոլոգիա, բարձրագույն էներգիայի աստղաֆիզիկա, տեսական ֆիզիկա եւ մաթեմատիկական ֆիզիկա:
4. ԻԿՐԱՆԵՏ-ը կհամակարգի ցանցի անդամ հանդիսացող համալսարանների եւ հետազոտման կենտրոնների անդամների հետազոտական գործունեությունը, որոնք գործում են տարբեր աշխարհագրական տարածքներում: Այս համագործակցությունը թույլ կտա նաեւ իրականացնել ուսումնական գործունեություն, որը անհրաժեշտ է ԻԿՐԱՆԵՏ-ի բոլոր կենտրոններում երիտասարդ գիտնականների կատարելագործման համար: Յուրաքանչյուր կենտրոն կկիսի իր սեփական սարքերը ցանցի բոլոր այլ անդամների

հետ: Նման սարքերը տնտեսական եւ գիտական արժեք են ներկայացնում եւ կարեւոր են ԻԿՐԱՆԵՏ-ի հետազոտական ծրագրերը իրականացնելու համար:

5. ԻԿՐԱՆԵՏ-ը կխրախուսի գիտնականների շարժը կենտրոնների միջեւ՝ այն պայմանով, որ յուրաքանչյուր կենտրոն կհոգա իր հետազոտողների ճանապարհածախսերը, իսկ տեղում կատարվող ծախսերը կհոգա հյուրընկալ հաստատությունը:

6. ԻԿՐԱՆԵՏ-ը կհատկացնի կենսաթոշակներ երիտասարդ ուսանողներին, շրջանավարտներին, ասպիրանտներին եւ թեկնածուներին հատուկ ուսումնական ծրագրերի շրջանակներում:

7. ԻԿՐԱՆԵՏ-ը պատրաստ կլինի ծառայել այն գիտական հաստատություններին եւ անդամ պետություններին, որոնք ցանկանում են համագործակցել ռելյատիվիստական աստղաֆիզիկայի բնագավառում:

## ՅՈԴՎԱԾ 4
## Կառուցվածքը

ԻԿՐԱՆԵՏ-ը կունենա կազմակերպական հետեւյալ կառուցվածքը՝

ա) ղեկավար կոմիտե,

բ) տնօրեն,

գ) գիտական կոմիտե:

## ՅՈԴՎԱԾ 5
## Ղեկավար կոմիտե

1. Ղեկավար կոմիտեն բաղկացած կլինի հետեւյալ անդամներից.

ա) ԻԿՐԱՆԵՏ-ի անդամ հանդիսացող յուրաքանչյուր պետության եւ միջազգային կազմակերպության մեկ ներկայացուցիչ,

բ) ցանկացած այլ պետության կամ միջազգային կազմակերպության եւս մեկ ներկայացուցիչ, որը ֆինանսապես կօժանդակի ԻԿՐԱՆԵՏ-ի գործունեությանը,

գ) ԻԿՐԱՆԵՏ-ի անդամ հանդիսացող յուրաքանչյուր համալսարանի եւ հետազոտական կենտրոնի մեկ ներկայացուցիչ,

դ) ցանկացած այլ հաստատության մեկ ներկայացուցիչ, որը օժանդակում է ԻԿՐԱՆԵՏ-ի գործունեությանը եւ ընդունվել է որպես անդամ՝ ղեկավար կոմիտեի որոշմամբ,

ե) Իտալիայի Կառավարության ֆինանսների նախարարի մեկ ներկայացուցիչ եւ Պեսկարայի քաղաքապետի մեկ ներկայացուցիչ՝ ազգային ներդրման եւ տեղակայման համաձայնագրով նախատեսված ներդրման պահից: Ինչ վերաբերում է Յամաձայնագրին միանալուն, մասնակցությունը ազատ կլինի ԻԿՐԱՆԵՏ-ում ներդրում կատարող յուրաքանչյուր պետության եւ միջազգային կազմակերպության ներկայացուցիչների համար,

զ) Սթենֆորդի համալսարանի մեկ ներկայացուցիչ, մեկ ներկայացուցիչ Արիզոնայի համալսարանից, մեկը՝ Սպեկոլա Վատիկանից եւ մեկն էլ՝ ԻԿՐԱ-ից՝ որպես հիմնադիր անդամներ:

2. Ղեկավար կոմիտեն իր անդամներից կընտրի երեք տարի ժամկետով վերընտրվող նախագահ:

3. Տնօրենը կլինի ղեկավար կոմիտեի գործադիր քարտուղարը:

4. Ղեկավար կոմիտեն նիստեր կգումարի տարին մեկ անգամ. նախագահի կողմից հրավիրվելու դեպքում այն արտակարգ նիստեր կգումարի իր նախաձեռնությամբ կամ անդամների առնվազն կեսի պահանջով:

5. Անդամների մեծամասնությունը կկազմի քվորում ղեկավար կոմիտեի նիստերին:

6. Ղեկավար կոմիտեն կընդունի ընթացակարգի իր կանոնները:

## ՅՈԴՎԱԾ 6
## Ղեկավար կոմիտեի գործառույթները

Ղեկավար կոմիտեի գործառույթները կլինեն՝
1) ընտրել ԻԿՐԱՆԵՏ-ի տնօրեն,
2) լսելով գիտական կոմիտեին՝ ձեւավորել ընդհանուր ուղեցույցներ ԻԿՐԱՆԵՏ-ի գործունեության համար՝ հաշվի առնելով նրա նպատակները, ինչպես նշված է 3-րդ հոդվածում,
3) քննել՝
ա. բյուջեի տարեկան մակարդակը,
բ. համապատասխան ավանդների մակարդակը,
գ. ֆինանսական պլանները,
դ. ԻԿՐԱՆԵՏ-ի գործունեության համար հատկացվող ֆոնդերի օգտագործումը,
4) քննարկել տնօրենի առաջարկները ԻԿՐԱՆԵՏ-ի ծրագրի, աշխատանքային պլանների, ֆինանսական պլանների, աշխատակազմի եւ բյուջեի վերաբերյալ եւ այնուհետեւ ընդունել որոշումներ,
5) ընդունել, ներկայացնել համապատասխան ներդնողների հավանությանը բյուջեի աճը՝ հիմնված ԻԿՐԱՆԵՏ-ի պահանջների վրա,
6) քննարկել ԻԿՐԱՆԵՏ-ի գործունեության վերաբերյալ տնօրենի տարեկան եւ այլ զեկույցները,
7) նշանակել ֆինանսական հաշվետվությունների օտարերկրյա աուդիտորներ եւ ընդունել նրանց զեկույցը,
8) ընդունել աշխատակազմի Կանոնադրությունը, ինչպես ընդունված է Միավորված ազգերի կազմակերպության համակարգի այլ միջազգային կազմակերպություններում:

## ՀՈԴՎԱԾ 7
## Քվեարկություն ղեկավար կոմիտեի կողմից

Ղեկավար կոմիտեի կողմից քվեարկությունը կարգավորվում է հետեւյալ կերպ.
1) ղեկավար կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն,
2) ղեկավար կոմիտեի խորհրդի որոշումները կայացվում են ներկա գտնվող քվեարկող անդամների մեծամասնությամբ, եթե այլ բան սահմանված չէ սույն Կանոնադրության 8-րդ հոդվածում:

## ՀՈԴՎԱԾ 8
## Տնօրենի նշանակումը

Վերընտրվող տնօրենի նշանակումը, հինգ տարին չգերազանցող ժամանակահատվածով, կորոշվի ղեկավար կոմիտեի անդամների երկու երրորդի մեծամասնությամբ: Քվորումի բացակայության դեպքում, երկու անգամ նիստ գումարելուց հետո, նշանակումը կիրականացվի ներկա անդամների մեծամասնության կողմից: Առաջին հինգ տարիների ընթացքում ԻԿՐԱ-ի նախագահը կնշանակվի որպես տնօրեն:

## ՀՈԴՎԱԾ 9
## Տնօրենի գործառույթները եւ լիազորությունները

1. Տնօրենը կլինի ԻԿՐԱՆԵՏ-ի գլխավոր ակադեմիկոս եւ վարչական պաշտոնյա: Այս առումով տնօրենը՝
ա) կկառավարի ԻԿՐԱՆԵՏ-ը,
բ) կպատրաստի առաջարկներ ԻԿՐԱՆԵՏ-ի ընդհանուր գործունեության եւ աշխատանքային պլանների վերաբերյալ՝ ղեկավար կոմիտեի հավանությանը ներկայացնելու համար,
գ) կպատրաստի ԻԿՐԱՆԵՏ-ի ֆինանսական պլաններ եւ բյուջետային առաջարկներ՝ ղեկավար կոմիտեի ընդունմանը ներկայացնելու համար,
դ) կվերահսկի ԻԿՐԱՆԵՏ-ի աշխատանքային ծրագրերի կատարումը եւ կիրականացնի վճարումներ կառավարող խորհրդի կողմից ընդունված ղեկավար ցուցումների եւ հատուկ

որոշումների շրջանակներում,

ե) տնօրենը ԻԿՐԱՆԵՏ-ի իրավական ներկայացուցիչն է: Նա կստորագրի բոլոր փաստաթղթերը, կոնտրակտները, համաձայնագրերը, պայմանագրերը եւ այլ իրավական փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ԻԿՐԱՆԵՏ-ի նորմալ գործունեությունը ապահովելու համար: Ղեկավար կոմիտեն կարող է նախատեսել տնօրենի կողմից այդ լիազորությունների փոխանցման աստիճանը: Կոնտրակտները, համաձայնագրերը եւ պայմանագրերը, որոնք ազդում են ԻԿՐԱՆԵՏ-ի կառավարման, նպատակների, տեղակայման, ընդլայնման կամ լուծարման կամ հյուրընկալ երկրում հարաբերություններին վերաբերող կարեւոր խնդիրների վրա, ենթակա են ղեկավար կոմիտեի հավանությանը:

2. Տնօրենը կունենա այնպիսի գործառույթներ եւ լիազորություններ, որոնք կարող են նախատեսվել սույն փաստաթղթի դրույթներով, մասնավորապես՝

ա) ԻԿՐԱՆԵՏ-ի գործունեության համար աշխատակազմի համալրում եւ ղեկավարում,

բ) տարեկան հիմքով անցկացնել ֆինանսական գործողությունների ֆինանսական աուդիտ օտարերկրյա հաշվապահական ֆիրմայի կողմից (6-րդ հոդվածի 6-րդ կետ):

## ՀՈԴՎԱԾ 10
## Գիտական կոմիտե

1. Կստեղծվի գիտական կոմիտե՝ բաղկացած ԻԿՐԱՆԵՏ-ի անդամ հանդիսացող յուրաքանչյուր պետության, միջազգային կազմակերպության, համալսարանի կամ հետազոտական կենտրոնի մեկական ներկայացուցչից:

2. Գիտական կոմիտեն իր անդամներից պարզ մեծամասնությամբ կընտրի վերընտրվող նախագահ երեք տարի ժամկետով:

## ՀՈԴՎԱԾ 11
## Գիտական կոմիտեի գործառույթները

1. Գիտական կոմիտեն ԻԿՐԱՆԵՏ-ին կտեղեկացնի գործունեության իր ծրագրերի մասին՝ հաշվի առնելով աշխարհի կարեւոր ակադեմիական, գիտական, կրթական եւ մշակութային միտումները՝ կապված իր նպատակների հետ:

2. Գիտական կոմիտեն կապահովի ԻԿՐԱՆԵՏ-ի գիտական գործունեության համակարգումը եւ առաջարկներ կներկայացնի տնօրենին ԻԿՐԱՆԵՏ-ի հետագա ընդլայնման եւ հետազոտության առանձին ուղղությունների վերաբերյալ:

3. Ղեկավար կոմիտեն եւ տնօրենը կարող են գիտական կոմիտեից խորհուրդ խնդրել:

4. Գիտական կոմիտեն կընդունի ընթացակարգի իր կանոնները եւ կհավաքվի տարին մեկ անգամ:

## ՀՈԴՎԱԾ 12
## Քարտուղարություն

1. ԻԿՐԱՆԵՏ-ի քարտուղարությունը բաղկացած կլինի այն աշխատակազմից, որն անհրաժեշտ է իր գործունեության համար:

2. Քարտուղարության անդամները կնշանակվեն տնօրենի կողմից՝ 9-րդ հոդվածի 2-րդ կետի "ա" ենթակետին համապատասխան:

3. Աշխատակազմի աշխատանքում եւ ծառայության պայմանների որոշման հարցում առաջնահերթ քննարկումները անհրաժեշտ կլինեն որակի բարձր մակարդակ եւ արդյունավետություն ապահովելու համար:

4. Աշխատավարձերի չափերը, ապահովագրությունը, թոշակի համակարգը եւ աշխատանքի այլ պայմանները կամրագրվեն աշխատակազմի Կանոնադրության մեջ:

## ՀՈԴՎԱԾ 13
## Ֆինանսներ

1. ԻԿՐԱՆԵՏ-ը ձեռք կբերի իր ֆինանսական ռեսուրսները այնպիսի միջոցներից, ինչպիսիք են կամավոր ներդրումները եւ նվիրատվությունները, դասընթացների եւ սեմինարների ուսումնական վճարները, ուսումնական սիմպոզիումների եւ տեխնիկական օգնության վճարները, հրատարակումների եւ այլ ծառայության եկամուտները, վարկերից, նվիրաբերումներից եւ բանկային հաշիվներից ստացվող տոկոսային եկամուտը:

2. Չի պահանջվի, որ սույն Կանոնադրության Կողմերը հաստատությանը ֆինանսական աջակցություն տրամադրեն՝ բացի կամավոր ներդրումներից:

3. ԻԿՐԱՆԵՏ-ի ֆինանսական գործողությունները կկառավարվեն ղեկավար կոմիտեի կողմից ընդունված ֆինանսական կանոններով՝ Միավորված ազգերի՝ հաստատված սկզբունքների համապատասխան:

4. ԻԿՐԱՆԵՏ-ի բյուջեն կհաստատվի ղեկավար կոմիտեի կողմից՝ ամեն տարի:

5. Իտալիայի Կառավարությունը համաձայն է ներդրում կատարել ԻԿՐԱՆԵՏ-ի բյուջեում հետեւյալ կերպ՝ սույն փաստաթղթի ուժի մեջ մտնելուն պես յուրաքանչյուր տարվա ֆինանսական ներդրումը կկազմի մինչեւ 1.549.370 եվրո, եւ այն կարող է աճել՝ ԻԿՐԱՆԵՏ-ի կարիքներից կախված, որոնք կորոշվեն ղեկավար կոմիտեի կողմից՝ 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

6. Ցանկացած այլ ներդրում, որը ԻԿՐԱՆԵՏ-ը կարող է ստանալ պետություններից, միջազգային կազմակերպություններից կամ միջազգային ոչ կառավարական կազմակերպություններից, համալսարաններից եւ հետազոտական կենտրոններից, մատուցած ծառայությունների դիմաց վճարներից, նույնպես կկազմի բյուջեի մաս:

7. Բյուջեն կծածկի աշխատակազմի ծախսերը, ընթացիկ եւ ծրագրային ծախսերը:

8. Պեսկարայի քաղաքապետարանը Պեսկարայում ԻԿՐԱՆԵՏ-ի գործունեության համար կհատկացնի շինություններ:

## ՀՈԴՎԱԾ 14
## Հարաբերությունները այլ կազմակերպությունների հետ

1. Իր նպատակներին առավել արդյունավետ ճանապարհով հասնելու համար ԻԿՐԱՆԵՏ-ը կարող է համապատասխան ազգային, տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների եւ գործակալությունների հետ սերտ համագործակցության նպատակով կնքել համաձայնագրեր:

2. Այն հետազոտական կենտրոնները, որոնք ցանկանում են մասնակցել ԻԿՐԱՆԵՏ-ի գործունեությանը, ինչպես նախատեսված է սույն փաստաթղթով, պետք է տնօրենին ուղարկեն համապատասխան ծանուցում:

## ՀՈԴՎԱԾ 15
## Իրավունքներ, արտոնություններ եւ անձեռնմխելիություն

Տեղակայման համաձայնագիրը կստորագրվի Իտալիայի Հանրապետության Կառավարության եւ ԻԿՐԱՆԵՏ-ի միջեւ, որպեսզի հաստատվեն աշխատակազմի անդամների եւ պաշտոնական այցելուների իրավունքները, արտոնությունները եւ անձեռնմխելիությունը, այդ միջազգային կազմակերպությունը հիմնելուն պես:

## ՀՈԴՎԱԾ 16
## Փոփոխություններ

Սույն Կանոնադրությունը կարող է փոփոխվել ղեկավար կոմիտեի կողմից՝ Համաձայնագրի Կողմեր հանդիսացող պետությունների եւ միջազգային կազմակերպությունների միաձայն քվեարկությամբ: Ցանկացած փոփոխություն ուժի մեջ կմտնի հաստատումից վեց ամիս հետո:

## ՀՈԴՎԱԾ 17
## Լուծարում

1. ԻԿՐԱՆԵՏ-ը կարող է լուծարվել ղեկավար կոմիտեի՝ քվեարկող բոլոր անդամների երեք քառորդի մեծամասնության կողմից հավանության արժանանալու դեպքում, եթե որոշվում է, որ ԻԿՐԱՆԵՏ-ի նպատակները չեն իրագործվել:
2. Լուծարման դեպքում հյուրընկալ երկրում կամ այլ երկրներում գտնվող ԻԿՐԱՆԵՏ-ի գույքը կփոխանցվի այդ երկրներին՝ նմանատիպ նպատակներով օգտագործելու համար, կամ այդ երկրներում կբաշխվի այն հաստատություններին, որոնք ունեն նույն նպատակները, ինչ որ ԻԿՐԱՆԵՏ-ը, այդ երկրների Կառավարությունների եւ ղեկավար կոմիտեի միջեւ համաձայնագիր կնքվելուց հետո:

ՀՈԴՎԱԾ 18
Եզրափակիչ դրույթներ

ԻԿՐԱՆԵՏ-ի փակման դեպքում Համաձայնագրի Կողմերի համար չի լինի ոչ մի ծախս:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. հուլիսի 20-ից:

ՀՀՄԱՊՏ 2006/ 8(16), ԵՄՊ, 28.12.06, անգլերեն բաժին, հոդ. 19

AGREEMENT
On the establishment of the international network of centers for relativistic astrophysics (ICRANET)
PESCARA, ITALY

Preamble

Aware of the importance of research in relativistic astrophysics for the understanding of the life and evolution of stars and of the structure of our universe as well as for the identification of the fundamental laws of nature;
Aware that research in this area must be based on international co-operation as a necessity;
Recognising that the study of the celestial and astrophysical objects has deep roots in most cultures;
Considering the wide popular appeal for discoveries of heavenly bodies like pulsars, quasars and black holes, in all countries;
Stressing the importance for development of many of the technologies and techniques used in and associated with relativistic astrophysics such as optical, radio, space and telecommunication technologies;
Whereas, the Parties to this Agreement wish to create an International Network of Centres for Relativistic Astrophysics, hereinafter referred to as ICRANET, as an international independent institution with suitable governance, juridical personality and appropriate international status, authorities, privileges and immunities and other conditions necessary to enable it to operate effectively toward the attainment of his objectives;
Recalling that the Italian Government will negotiate a seat agreement as soon as the ICRANET will have obtained the status of international organisation;
Now therefore, the Parties signatory hereto agree as follows:

Article I
Establishment

There shall be established an international organisation entitled

ICRANET which is to operate in accordance with the Statute appended hereto and made an integral part hereof, as such Constitution may be amended when necessary in accordance with Article 16 thereof.

## Article II
## Signature, Ratification, Acceptance, Consent to be bound, Accession

i) This Agreement shall be open for signature by States and International Organisations in care of the Government of the Republic of Italy. It shall remain open for signature for a period of two years from, unless such period is extended prior to its expiry by the Depositary at the request of the Board of ICRANET.

ii) The Government of the Republic of Italy shall be the Depositary of this Agreement

iii) The consent to be bound by this Agreement shall be undertaken by the signatories in accordance with their own laws, regulations and procedures.

iv) The consent of a State or of an International Organisation to be bound by this Agreement shall not constitute any obligation whatsoever to provide financial support to ICRANET beyond voluntary contributions.

v) After the expiration of the period specified in paragraph i), the present Agreement shall remain open for accession by any State and any International Organisation, contingent upon approval by the Governing Board of the ICRANET by simple majority.

vi) The instruments of accession shall be deposited with the Depositary of this Agreement.

## Article III
## Contractor Parties

Once ICRANET is established, Universities and research Centres shall freely associate.

## Article IV
## Entry into Force

i) This Agreement and the Statute appended thereto shall come into force immediately upon receipt by the ratification or formal acceptance by three States or International Organisations parties to this Agreement.

ii) For each State or International Organisation which will deposit their document of accession or formal acceptance after the entry into force of this Agreement, this Agreement will enter into force as soon as such deposit will be accomplished.

## Article V
## Termination

Any party to this Agreement may, by written instrument to the Depositary, denounce this Agreement. Such termination of the consent to be bound shall become effective three months after the date on which such instrument is received.

## Article VI
## Settlement of Disputes

Any dispute between the Parties concerning the interpretation or application of the present Agreement will be solved through the Diplomatic channels.

Article VII
Authentic text

The authentic text of the present Agreement, including the Constitution appended thereto, shall be in the Italian and in the English language.
In witness whereof, the undersigned Plenipotentiaries, being duly authorised by their respective Governments, have signed this Agreement in a single original in the Italian and in the English language both texts being equally faithful.

Done at Rome on
For the Government of

Done at Rome on
For the Government of

Done at Rome on
For the Government of

Done at Rome on
For the Government of

Done at Rome on
For the Government of

STATUTE of the ICRANET

Article 1
Status

i) The ICRANET shall operate as an International organisation, and shall be organised exclusively for scientific and educational purposes.
ii) The ICRANET shall possess full juridical international personality and enjoy such legal capacities as may be necessary for the exercise of its functions and the fulfilment of its purposes.

Article 2
Headquarters Location

The location of the ICRANET headquarters is located in Pescara, in Italy, unless the Steering Committee does decide to move the headquarters elsewhere. In order to be operative and to achieve its goals the Steering Committee may establish Research Centres in other Countries as required to support the ICRANET programme, according to Article 3.

Article 3
Objectives and Activities

i) The ICRANET shall promote international scientific co-operation and

undertake research in the field of Relativistic Astrophysics. It shall also co-ordinate international theoretical, experimental and observational research using instrumentation in space, on the earth's surface or underground;

ii) its activities shall consist of:

a) development of scientific research;

b) teaching at doctorate and post-doctorate level;

c) long-term and short-term scientific training;

d) organisation of workshops and scientific meetings;

e) arrangement of exchange programmes for scientists and associates;

f) development of new standards of electronic communication among the Research Centres;

g) establishment of integrated data banks for all celestial bodies in all possible observable wave bands;

h) development of new standards of communications;

i) co-operation and affiliation with international scientific organisations;

j) scientific co-operation and technology transfer involving industry;

k)any other activities related to its institutional goals;

iii) the scientific areas covered shall include cosmology, high-energy Astrophysics, theoretical physics and mathematical physics;

iv) the ICRANET shall co-ordinate the research activities of Universities and Research Centres members of the Network which operate on different geographical areas. This collaboration shall allow as well the teaching activities necessary for the development of young scientists in all Centres of the ICRANET. Each Centre will share its own facilities with all other members of the Network. Such facilities are at times of very great economical and scientific value and are essential in carrying out the research projects of the ICRANET;

v) the ICRANET shall encourage the mobility of scientists among the Centres on the understanding that each Centre covers the travel expenses of its own researchers while the local expenses are covered by the host institution;

vi) the ICRANET will grant fellowships for young students at the graduate, postgraduate and postdoctoral level within the framework of special teaching programmes;

vii) the ICRANET shall be at the service of the scientific institutions and the Member States that wish to co-operate in the field of relativistic astrophysics.

## Article 4
## Organisation

The ICRANET shall have an organisational framework consisting of the:

a) Steering Committee

b) Director

c) Scientific Committee

## Article 5
## Steering Committee

i) The Steering Committee shall be composed of the following members:

a) one representative of each State and of each International Organisation member of the ICRANET;

b) one further representative of any other State or International Organisation which will contribute financially to the activities of ICRANET

c) one representative of each University and research Centre member of the ICRANET;

d) one representative of any other institution making a contribution to the activities of the ICRANET and accepted as a Member by a decision of the Steering Committee;

e) one representative of the Finance Minister of the Italian Government and one representative of the Mayor of Pescara, since the national contribution and the contribution envisaged in the seat agreement. With respect to successive accession to the Agreement, the participation will be open to representatives for each State and International Organisation contributor to the ICRANET.

f) one representative of Stanford University, one of University of Arizona, one of Specola Vaticana and one of ICRA as founding Members

ii) the Steering Committee shall elect the Chairperson from among its members for a term of 3 years, renewable;

iii) the Director shall be the Executive Secretary of the Steering Committee;

iv) the Steering Committee shall meet in ordinary session once a year; it shall meet in an extraordinary session if summoned by the Chairperson, either on his own initiative or at the request of at least half of its members;

v) A majority of the Members shall constitute a quorum for the Steering Committee meetings.

vi) the Steering Committee shall adopt its own rules of procedure.

## Article 6
## Functions of the Steering Committee

The functions of the Steering Committee shall be:

i) to elect the Director of the ICRANET;

ii) to formulate, after hearing the Scientific Committee, the general guidelines for the ICRANET activities, taking into account its objectives as specified in Article 3;

iii) to examine:

a) the annual level of the budget;

b) the level of respective contributions;

c) the financial plans;

d) the use to be made of the funds available for the operations of the ICRANET;

iv) to consider the proposals of the Director for the programme, work plans, financial plans, staffing and budget proposals of the ICRANET and to take decisions thereof.

v) to adopt, subject to the approval of the contributors concerned, increases in the budget based on the ICRANET requirements;

vi) to consider the annual and other reports of the Director on the activities of the ICRANET;

vii) appoint an external auditor of the financial records and approve their report.

viii) to adopt the staff regulations as established in other International Organisations in the United Nations Organisation System.

## Article 7
## Voting By the Steering Committee

Voting by the Steering Committee is regulated as follows:
i) each member of the Steering Committee has one vote,
ii) decisions of the Board Steering Committee shall be made by majority of the voting members present except as specified otherwise in this Statute in Art. 8;

## Article 8
## Appointment of the Director

The appointment of the Director, for a period not exceeding five years, renewable, will be decided by a two-thirds majority of the members of the Steering Committee. In absence of the quorum, after two calls of the meeting, the appointment will be decided by the majority of the members present. During the initial period of five years the President of ICRA will be appointed Director.

## Article 9
## Functions and Powers of the Director

i) The Director shall be the chief academic and administrative officer of the ICRANET. In this capacity, the Director shall:
a) administer the ICRANET;
b) prepare proposals for the general activities and work plans of the ICRANET for submission to the Steering Committee for its approval;
c) prepare the financial plans and budget proposals of the ICRANET for submission to the Steering Committee for its approval;
d) oversee the execution of the work programmes of the ICRANET and make payments within the framework of general guidelines and specific decisions adopted by the Governing Board;
e) The Director is the legal representative of the ICRANET. He/she shall sign all deeds, contracts, agreements, treaties and other legal documents which are necessary to ensure the normal operation of the ICRANET. The Steering Committee may stipulate the extent to which these powers may be delegated by the Director. Contracts, agreements and treaties which affect the governance, objectives, location, expansion or dissolution of the ICRANET, or major issues of the relationship to the host country are subject to approval by the Steering Committee.
ii) The Director shall have such other functions and powers as may be prescribed by the provisions of the present Agreement, in particular:
a) Recruit and manage the staff for the activities of the ICRANET;
b) Conduce on an annual basis a financial audit of the financial operations by an external accounting firm (see article 6[vi]).

## Article 10
## The Scientific Committee

i) There shall be a Scientific Committee composed of one representative of each State, international Organisation, University or research Centre Member of the ICRANET;
ii) the Scientific Committee shall elect by simple majority the Chairperson from among its members for a term of three years renewable.

## Article 11
## Functions of the Scientific Committee

i) The Scientific Committee shall advise the ICRANET on its programmes of activity having due regard to major academic, scientific, educational and cultural trends in the World relevant to its objectives;
ii) the Scientific Committee shall ensure the co-ordination of the scientific activities of the ICRANET and make recommendations to the Director regarding further growth of the ICRANET and specific avenues of research;
iii) the Steering Committee and the Director may request the Scientific Committee for advice;
iv) the Scientific Committee shall adopt its own rules of procedure and shall normally meet once a year.

## Article 12
## Secretariat

i) The ICRANET Secretariat shall consist of the staff necessary for its proper functioning;
ii) the members of the Secretariat shall be appointed by the Director in accordance with Article 9 (ii, a);
iii) the paramount consideration in the employment of staff and in the determination of the conditions of service shall be the necessity of securing the highest standards of quality and efficiency;
iv) Salary scales, insurance, pension schemes and any other terms of employment shall be laid down in staff regulations.

## Article 13
## Finance

i) The ICRANET shall obtain its financial resources through such means as voluntary contributions and donations; course and seminar tuition fees; training workshops and technical assistance fees; publications and other service revenue; and interest income from trusts, endowments, and bank accounts;
ii) The Parties to this Agreement shall not be required to provide financial support to the Institute beyond voluntary contributions.
iii) The financial operations of the ICRANET shall be governed by financial regulations to be adopted by the Steering Committee in accordance with the established principles of the United Nations.
iv) The budget of the ICRANET is approved annually by the Steering Committee.
v) the Italian Government agree to contribute to the budget of the ICRANET as follows: starting with the enter into force of this Agreement, the financial contribution for each year shall amount to U.1.549.370 and can increase with the needs of the ICRANET as defined by the Steering Committee in accordance with Article 6 (V);
vi) any such contribution as the ICRANET may receive from States, from the International Organisations or International Non-Governmental Organisations, from Universities and research Centres and from payments for services rendered, will be as well part of the budget;
vii) the budget shall cover the cost of staff, operating costs and

programme expenses;

viii) The Municipality of Pescara has made available for the ICRANET activities premises in Pescara.

## Article 14
## Relationships with other organisations

i) In order to achieve its objectives in the most efficient way, ICRANET may enter in agreements for close co-operation with relevant national, regional or International Organisations, foundations and agencies.

ii) The Research Centres that wish to participate in the ICRANET activities, as provided for under this agreement, shall send to the Director notification to this effect.

## Article 15
## Rights, Privileges and Immunities

A seat agreement will be signed between the Government of the Italian Republic and the ICRANET in order to establish the rights, privileges and immunities of the staff members and official visitors as soon as such an International Organisation will be established.

## Article 16
## Amendments

This Constitution may be amended by the Steering Committee by the unanimous vote of the States and International Organisations parties of this Agreement. Any amendments shall enter into force six month after their approval.

## Article 17
## Dissolution

i) The ICRANET may be dissolved subject to the approval of a three-fourths majority of all the voting members of the Steering Committee if it is determined that the purposes of the ICRANET have not been reached;

ii) In case of dissolution, the assets of the ICRANET situated in the host or other countries shall be transferred to such countries for use for similar purposes or distributed to institutions having purposes similar to those of the ICRANET in the respective countries after agreement between the Government of those countries and the Steering Committee.

## Article 18
## Final Clauses

In the event of closure of the ICRANET there will be no cost for the Members of the present Agreement.

The Agreement has entered into force on 20.07.2005.